

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋԻ ԱՎԱԶԱԿՈՂՃԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ
ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

«ՄԼ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ

տնօրեն՝

Է. Մարգարյան

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	3
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	6
Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	6
Նախատեսվող գործունեության բնութագիրը	9
Նախագծման նորմատիվ-իրավական հենքը	11
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	15
Գտնվելու վայրը	15
Ռելիեֆ, երկրաձևաբանություն, սեյսմիկ բնութագիր	18
Շրջանի կլիման	21
Մթնոլորտային օդ	24
Ջրային ռեսուրսներ	24
Հողեր	28
Բուսական և կենդանական աշխարհ	29
Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ	33
3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	37
Ենթակառուցվածքներ	37
Հողերի տնտեսական յուրացման բնութագիր	41
Պատմության, մշակութային հուշարձաններ	44
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ	
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	45
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	51
6. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ	54
7. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ	56
6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ) ՊԼԱՆ	59
Օգտագործված գրականության ցանկ	62
Հավելված 1.	63

Ընդերք՝ հողածածկույթից ներքև, իսկ դրա բացակայության դեպքում՝ երկրի մակերևույթից, ջրավազանների կամ ջրհոսքերի հատակից ներքև՝ ըստ խորության տեղադրված երկրակեղևի մաս, որը մատչելի է ընդերքօգտագործման համար.

Ընդերքօգտագործում՝ երկրաբանական ուսումնասիրությունների, օգտակար հանածոների արդյունահանման նպատակներով ընդերքի օգտագործում կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակում.

Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն՝ թույլտվություն, որն իրավունք է տալիս ընդերքի որոշակի տեղամասում իրականացնելու օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման աշխատանքներ.

Ընդերքի տեղամաս՝ որոշակի աշխարհագրական սահմանանշում պարունակող ընդերքի մաս, որում պետք է իրականացվեն ընդերքօգտագործման աշխատանքներ.

Օգտակար հանածո՝ ընդերքում պարփակված պինդ հանքային գոյացումներ, հեղուկ կամ գազային բաղադրամասեր, այդ թվում՝ ստորերկրյա ջրեր (քաղցրահամ և հանքային) և երկրաջերմային էներգիա, ջրավազանների, ջրհոսքերի հատակային նստվածքներ, որոնց քիմիական կազմը և ֆիզիկական հատկանիշները թույլ են տալիս դրանք օգտագործել ուղղակիորեն կամ վերամշակումից հետո.

Օգտակար հանածոյի պաշարներ՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են.

Հանքավայր՝ ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական.

Ընդերքօգտագործման իրավունք՝ համապատասխան ընդերքօգտագործման համաձայնությունով կամ թույլտվությունով, ծրագրով կամ նախագծով, ընդերքօգտագործման պայմանագրով, լեռնահատկացման ակտով հավաստվող՝ ընդերքի որոշակի տեղամասի երկրաբանական ուսումնասիրության կամ օգտակար հանածոների արդյունահանման բացառիկ իրավունքներ.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական՝ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում

շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում

Բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում

Բույսերի Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Կենդանիների Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող կենդանիների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ

Հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով

Խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր

Ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական

Ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով մշտադիտարկումներ՝ ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային ծրագրերին զուգընթաց՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրով, օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային նախագծով, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով և ազդեցության գնահատման հաշվետվությամբ ամրագրված ցուցանիշների հիման վրա իրականացվող մշտադիտարկումներ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

▪ *Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը*

ՀՀ Արարատի մարզի Գետամեջի ավազակոպձային խառնուրդի հանքավայրի տարածքում նախատեսվում է իրականացնել արդյունահանման աշխատանքներ:

Շրջանի երկրաբանական կառուցվածքի համառոտ նկարագրությունը տրվում է ըստ Ա. Գաբրիելյանի և Ա. Վեհունու տվյալներով:

Միջին էոցեն- մերձարաքսյան իջվածքներում այս ապարները մերկանում են Ազատ գետի միջին ավազանում և ներկայացված են 1100մ հզորությամբ կավերով, տուֆոավազաքարերով, տուֆոալերովիտներով և տուֆոարգիլիտներով:

Վերին օլիգոցեն-ստորին միոցեն- ներկայացված է ցամաքային բնույթի մոլասային խայտաբղետ շերտախմբով՝ կարմրա-գորշագույն կավերով, ավազաքարերով, ալերովիտներով և գիպսատար կավերով, 600-700մ հզորությամբ:

Չորրորդական ժամանակաշրջան- այս ժամանակաշրջանը բաժանվում է 3 էպոխայի՝

1. Հետալիոցեն-ստորին պլեյստոցենի ցամաքալձային նստվածքների հասվածք, որը ներկայացված է թույլ ցեմենտացված պոլիմիկտային գլաքարերով 5-155մ հզորությամբ, որոնք դեպի հարավ անկումով ծածկվում են Արաքսի ալյուվիալ նստվածքներով:
2. Միջին-վերին չորրորդականը ներկայացված է լճային և գետային նստվածքներով՝ ավազաքարերով, ավազներով և գլաքարերով: Արարատյան դաշտին բնորոշ մուգ կավերի շերտը, որը ծածկում է ավազներին և մեկուսիչ էկրանի դեր է խաղում արտեզիան ավազանի համար: Այս ապարների հզորությունը տատանվում է 20-100մ:
3. Վերին չորրորդականը ներկայացված է Արաքսի ժամանակակից նստվածքներով՝ ավազներ, ավազակավեր, որոնք կազմում են ժամանակակից գործող դարավանդները:

Ըստ շրջանի երկրաբանական կառուցվածքի տվյալների, ավազաշերտը գետահունային ալյուվիալ բնույթի առաջացում է պարզագույն երկրաբանական կառուցվածքով: Ավազակուտակի տարածումը հարավ-արևելքից դեպի հյուսիս-արևմուտք է 320-330° տարածման ազիմուտով, համաձայն գետահունի թեքության,

ունի մեղմ անկում դեպի հարավ-արևմուտք: Ըստ հորատման տվյալների, հզորությունը կազմում է 1.5-4.0մ: Հատիկային կազմով պատկանում է ավազակոպչային խառնուրդի դասին:

Հանքավայրի տեղանքի կոմուլյատիվ հարթավայրը ներկայացված է Արաքս գետի մշտական հոսքի մակարդակից 2.5-3մ բարձրությամբ վերհունային և պլիոցենի-հոլոցեն հասակի ալյուվիալ-դելյուվիալ նստվածքների կազմված ստորին դարավանդով: Հայցվող տարածքի հեռավորությունը Արաքս գետի ժամանակակից հունից կազմում է 95-100մ (ըստ Բուրաստան բնակավայրի կադաստրային քարտեզի):

Ավազակոպչային խառնուրդում կոպճի միջին պարունակությունը կազմում է 21.5-68%: Ավազը ըստ խոշորության մոդուլի տատանվում է շատ մանրահատիկ $M_k \leq 0.7$ մմ, միջինահատիկ $M_k \geq 2.3-2.5$ մմ և խոշորահատիկ $M_k \geq 2.6$ մմ:

Ըստ «Ավազ շինարարական աշխատանքների համար» 8736-95 ՀՍՀ ԳՈՍՀ-ի՝ ավազները պատկանում են երկրորդ դասին, կոպիճները պատկանում են Ճք-8 դասին, հատիկային կազմը տատանվում է 5-20մմ չափերով: Կավատիղմային զանգվածի պարունակությունը կուտակում կազմում է 0.5-3.0%:

Ավազակոպչային կուտակի հատիկային կազմն ունի բնորոշ գոտիավորում: Գետի կենտրոնից դեպի ափը նկատվում է հատիկայնության չափերի փոքրացում, ափամերձ մասում ավազի խոշորության մոդուլը տատանվում 0.7-1.0, իսկ դեպի գետի կենտրոնը աճելով հասնում է $M_k > 2.6$ մմ:

Նույնը արտահայտվում է նաև ուղղաձիգ ուղղությամբ, գետի հունի հատակում տիրապետում են կոպիճներն ու կոպչային ավազները, իսկ ափագծի մոտ՝ ավազները: Ավազակոպչային խառնուրդի քիմիական կազմը բնութագրվում է հետևյալ միջինացված ցուցանիշներով.

Աղյուսակ 1.

Միջին պարունակությունը, %						
SiO ₂	TiO ₂	Fe ₂ O ₃	Al ₂ O ₃	CaO	MgO	SO ₃
52.5	0.4	11.64	10.58	10.34	76.4	0.1

Գետամեջի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի շլիխների միներալոգիական կազմի ծանր ֆրակցիայում հանդիպող միներալներն են՝ պրենիտ, լեյկոկսեն, ցիրկոն, ռուտիլ, անատազ, կինովար :

Էլեկտրոմագնիսական ֆրակցիայում հանդիպում են՝ լիմոնիտ, օլիվին, նոնաքար, ամֆիբոլ, պիրոքսեն և պրենիտ :

Մագնիսական ֆրակցիան շլիխներում ներկայացված է՝ մագնետիտով, քրոմիտով, իլմենիտով, հեմատիտով, պիրոքսենով :

Ավազի ֆիզիկամեխանիկական հատկությունները ներկայացվում են աղյուսակ 2-ում :

Աղյուսակ 2.

Պարունակությունը ավազակոպճային խառնուրդում, %	Ծավալալրիքային զանգվածը, կգ/մ ³		Տեսակարար զանգվածը, կգ/մ ³	Խոշորության մոդուլը	Պարունակությունը						
	փերուն վիճակում	խտացված վիճակում			կոշտերում կավի, %	օրգանական խառնուկների, %	Ալկալիներում լուծվող SiO ₂ ամորֆ տարատեսակների, մմոլ/լ	SiO ₂ -ի վերահաշվարկված ծծումբի, սուլֆատի և սուլֆիդի, %	թիթղունի, %	ածխի, %	փոշենման կավատիրոնային մասնիկներ, %
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
61.85	1664	1841	2.77	2.37	չկա	չկա	25.70	0.17	չկա	չկա	1.51

Կոպճի ֆիզիկամեխանիկական հատկությունները ներկայացվում են աղյուսակ 3-ում :

Գետամեջի հանքավայրի ավազակոպճային խառնուրդի պաշարները հաստատվել են ՀՀ օգտակար հանածոների պաշարների պետական հանձնաժողովի (ՀՀ ՊՊՀ) 07.07.2000թ.-ի №77 որոշմամբ ըստ C₁ կարգի ստատիկ վիճակում 64.3հազ.մ³ :

Հաստատված պաշարները դասվել են վերականգնվողների շարքին (1 միավոր վերականգնման գործակցով) 64.3հազ.մ³/տարի ընդհանուր և 23.0հազ.մ³/հա.տարի տեսակարար քանակությամբ:

Պարունակությունը ավագակոպչային խառնուրդում, %	Ծավալալրիքային զանգվածը, կգ/մ³		Տեսակարար զանգվածը, կգ/մ³	Ջրակլանելիություն, %	Զանգվածի կորուստը խճի փորձարկման (ըստ ջարդելության) ժամանակ, %		Մակնիշն ըստ ջարդելության	Զանգվածի կորուստը խճի փորձարկման (ըստ մաշելիության) ժամանակ, %		Մակնիշն ըստ մաշելիության	Մակնիշն ըստ սառնակայունության
	փխրուն վիճակում	խտացված վիճակում			Ֆրակցիա			Ֆրակցիա			
					5-10մմ	10-20մմ		5-10մմ	10-20մմ		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
38.15	1624	1766	2.76	0.71	3.0	5.6	1000	6.0	8.5	И-1	F-25
Պարունակությունը, %											
թույլ ապարների հատիկների		կոշտերում կավի			փոշենման և կավային մասնիկների			կոդմնակի աղտոտ խախտումների			
1.3		չկա			0.8			չկա			

Հանքավայրի պաշարները պիտանի են շինարարական ավազի և խճի (ՀՍՏ ԳՈՍՏ 8267-95) և ավազի (ՀՍՏ ԳՈՍՏ 8736-95) արտադրության համար:

▪ **Նախատեսվող գործունեության բնութագիրը**

Գետամեջի ավագակոպչային խառնուրդի հանքավայրի լեռնատեխնիկական պայմանները բարենպաստ են և հնարավորություն են տալիս հանքավայրը մշակել բաց լեռնային աշխատանքներով:

Բացահանքերը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը.

- ամենամեծ երկարությունը – շուրջ 260մ,
- ամենամեծ լայնությունը – շուրջ 50մ,
- ամենամեծ խորությունը – 4.5մ,
- օտարման մակերեսը - շուրջ 1.33հա:

Յուրաքանչյուր տարի, սեզոնի սկզբում անհրաժեշտ է կատարել հետևյալ լեռնանախապատրաստական աշխատանքները.

- բացահանքի ջրհեռացման առվի կառուցում;

- օգտակար հաստաշերտի մակերևույթին տրանսպորտային սարքավորումների և էքսկավատորի շարժման ուղեծրով փոխադրվող երկաթբետոնե տիպային սալիկների տեղադրում:

Հայցվող տեղամասի բացումը կատարվում է բացահանքի հարավ-արևելյան մասից ընդլայնական կտրող խրամի անցումով: Կտրող խրամի լայնությունը հիմքի մասում ընդունված է 2մ, միջին խորությունը 4.5մ:

Տեղամասում մակաբացման ապարները բացակայում են:

Բացահանքի ծառայման ժամկետը կազմում է 20 տարի: Հայցվող հաշվեկշտոային պաշարների քանակը 60հազ.մ³:

Հանքավայրի շահագործման ժամանակ ընդունված է ընդլայնական ընթացքաշերտերով միակողանի մշակման համակարգ:

Ընդունված մշակման համակարգը ունի հետևյալ տարրերը՝

- ✓ աստիճանի բարձրությունը – հանքաշերտի հզորության չափով
- ✓ աստիճանի թեքության անկյունը՝
 - աշխատանքային – 40°;
 - ոչ աշխատանքային (մարված)-30°;
- ✓ ընթացքաշերտի լայնությունը -5մ;
- ✓ էքսկավատորի աշխատանքի անվտանգ գոտու շառավիղը – 15մ;
- ✓ աշխատանքային հրապարակի լայնությունը – 20մ:

Բացահանքի տարեկան արտադրողականությունը ընդունվում է համապատասխանաբար 60հազ.մ³:

Նախատեսվում է մոտեցնող ճանապարհների կարգաբերում:

Ավազի արդյունահանման աշխատանքները կատարվում է դեպի ներքև շերտիման եղանակով՝ 1.5 – 2.0մ³ շերտի տարողությամբ դրազլայնով սարքավորված էքսկավատորով կամ հակառակ թի էքսկավատորով:

Արտադրական հրապարակի մակերեսը ընդունվում է մոտ 220մ²: Անբարենպաստ եղանակներին աշխատողներին պատսպարվելու համար արդյունաբերական հրապարակում տեղադրվելու են երկու ինվենտարային տնակ, որոնցի մեկը՝ հանգստի սենյակ է, մյուսը՝ ջրցողարան: Բնական օդափոխմամբ ջրցողարանում նախատեսվելու է 2 ցնցուղ, որն ապահովվում է հոսող ջրով,

կախիչով, հեղուկ օճառով, էլեկտրական սրբիչով կամ միանվագ օգտագործման թղթյա անձեռոցիկներով:

Բացահանքի արդյունաբերական հրապարակում նախատեսվում է զուգարան, որում նախատեսվել է 1 ծորակներ ունեցող մեկ լվացարանով երկու սանիտարատեխնիկական սարքավորում, որը սահմանված կարգով պետք է դատարկվի:

Բացահանքի արտադրական հրապարակի տարածքի և մոտեցնող ճանապարհների լեռնատեխնիկական վերականգնումները իրականացվելու են արդյունահանման աշխատանքների լրիվ ավարտից հետո:

▪ ***Նախագծման նորմատիվ-իրավական հենքը***

Օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

– ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

– ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

– ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման,

ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

– ՀՀ Անտառային օրենսգիրք (ՀՕ-211, 24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

– «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

– «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

– «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:

– «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

– «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների,

շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

– «Թափոնների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-159-Ն, 24.11.2004թ.-ի), որով կարգավորվում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

– ՀՀ կառավարության 10.01.2013թ.-ի թիվ 22-Ն որոշում, որով սահմանվել են օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, դրանց իրականացման վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգերը:

– ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությամբ համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:

– ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

– ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:

– ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի

բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:

– ՀՀ կառավարության 20.01.2005թ.-ի N64-Ն որոշում, որով հաստատվել են ջրակոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները:

– ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը,

– ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,

– ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի,

– ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N676-Ն որոշում, որով հաստատվել են ՀՀ ընդերօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման պլանների օրինակելի ձևերը,

– ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:

– ՀՀ կառավարության 18.08.2021թ.-ի N1352-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված ռեկուլտիվացիոն աշխատանքների՝ նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգի հետ կապված իրավահարաբերությունները,

– ՀՀ կառավարության 10.01.2008թ.-ի N18-Ն որոշումը, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության տարածքում, Արաքս գետի ողողատներում գտնվող հանքավայրերից գետավազի արդյունահանման հետ կապված հարաբերությունները:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

▪ *Գտնվելու վայրը*

Գետամեջի ավազների հանքավայրը գտնվում է ՀՀ Արարատի մարզում Արտաշատ քաղաքից 7.5կմ հյուսիս-արևմուտք: Հանքավայրը ներառված է Արտաշատ խոշորացված համայնքի Բուրաստան բնակավայրի վարչական սահմաններում, գյուղի կենտրոնական հատվածը գտնվում է հանքավայրից մոտ 3.5կմ հյուսիս-արևմուտք: Տարածքի իրադրային հատակագիծը ներկայացված է նկար 1-3-ում:


Հանքավայրը տեղակայված է Արաքս գետի ձախ ափին, Հրազդան և Ագատ գետերի գետաբերանների միջև ՀՀ Պետական սահմանի եզրին և զբաղեցնում է մոտ 1.52հա: Արարատ-Երևան ավտոմայրուղու հետ հանքավայրը կապված է գրունտային ճանապարհով: Ծովի մակերևույթից հանքավայրը գտնվում է 818-820մ բարձրության վրա: Հայցվող տարածքից մոտ 1.9կմ հեռավորության վրա անցնում է Մ2 միջպետական ավտոճանապարհը:

Հայցվող մոտ 1.52հա տարածքը բնութագրվում է հետևյալ ծայրակետային կոորդինատներով ըստ ArmWGS-84 համակարգի՝

- | | |
|-------------------------------|-------------------------------|
| 1. 4425575.8888, 8456153.6666 | 5. 4425433.7644, 8456356.7432 |
| 2. 4425647.8070, 8456174.2387 | 6. 4425430.4803, 8456313.0186 |
| 3. 4425530.7844, 8456301.3680 | 1. 4425575.8888, 8456153.6666 |
| 4. 4425492.0476, 8456324.2786 | |

Տարածքի խոշոր բնակավայրը ՀՀ Արարատի մարզի մարզկենտրոն Արտաշատ քաղաքն, որի բնակչությունը 2021 թվականի տարեսկզբին կազմել է 19.1 հազ. մարդ:

Քաղաքը գտնվում է Երևանից 30 կմ հեռավորության վրա (հայոց պատմական մայրաքաղաք Արտաշատից 10կմ հյուսիս-արևմուտք), զբաղեցնում է 800 հա տարածություն: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ հատկապես առանձնանում են սննդամթերքի և խմիչի արտադրությունը (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքի), ինչպես նաև ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրությունը (շինարարական արտադրատեսակների, բնական քարերից երեսպատման նյութերի արտադրությունը):




Նկար 1.


ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՍԽԵՄԱՏԻԿ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Մասշտաբ 1: 25000

Արտատված է 5-Ե-6 և 6-Ա-ա տոպոգրաֆիական թերթերից



Նկար 2.



Նկար 3.

Բուրաստան, Ագատավան և Դալար գյուղերի մոտակա բնակելի շինությունները գտնվում են հանքավայրից մոտ 2.2-2.6կմ, Մ-2 միջպետական նշանակության ավտոճանապարհը՝ 1.9կմ, տեղական նշանակության բնահողային-ասֆալտապատ ավտոճանապարհը՝ մոտ 1.2կմ հեռավորությունների վրա:

▪ ***Ռելիեֆ, երկրաձևաբանություն, սողանքներ, սեյսմիկ բնութագիր***

Երկրաձևաբանական տեսակետից հանքավայրի տարածքը հարում է Արարատյան գոգավորության մասը կազմող հարթավայրին, որի թեքության անկյունը չի գերազանցում 4°:


Հանքավայրի տարածքի բարձրությունը տատանվում է 818-820մ-ի սահմաններում: Արարատյան դաշտը ձգված է արևելյան և հարավ-արևելյան ուղղությամբ, Ախուրյանի գետաբերանից մինչև Գայլի դրունքը, որով Արարատյան դաշտը միանում է Նախիջևանի սահմանին: Արարատյան դաշտն ունի 100կմ երկարություն, լայնությունը հյուսիս-արևմտյան մասում հասնում է 15-17կմ, հարավ-արևելյան մասում 4-5կմ: Մակերևույթն ընդհանրապես տափարակ է, աջից ու ձախից փոքր թեքությամբ դեպի Արաքս գետը: Վերջինիս հոսքի ուղղությամբ այն հավասարաչափ իջնում է կիլոմետրում 1.75մ: Տեղանքի բարձրությունը ծովի մակարդակից 800-1000մ է, ընդգրկելով նաև շրջակա նախալեռները, մինչև դրանց կտրուկ վերելքը դեպի լեռները: Արարատյան դաշտը մակերեսից ծածկված է նորագույն ալյուվիալ բերվածքներով, որոնք Արաքսի հունից դեպի նախալեռներ կրում են զգալի փոփոխություններ:

Շրջանի լեռների երկրաձևաբանական և մակերևույթի թեքության անկյունների սխեմատիկ քարտեզները բերվում են ստորև նկար 4 և 5-ում:

Հանքավայրի շրջանում արտածին երկրաբանական պրոցեսներ արտահայտված չեն, ինչը պայմանավորված է տարածքի երկրաձևաբանական առանձնահատկություններով:

Մոտակա հայտնի սողանքային մարմինը քարտեզագրվել է հանքավայրի տարածքից մոտ 12կմ հեռավորության վրա՝ Այգեզարդ բնակավայրից մոտ 2կմ հյուսիս-արևելք, Քաղցրաշեն բնակավայրից մոտ 0.5կմ հարավ-արևելք (նկար 6):

ՇՐՋԱՆԻ ԵԿՐԱԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

1 - Ցածր /700-1100մ/ ենթահորիզոնական մասամբ դարավանդավորված ներլեռնային հարթավայրեր

Նկար 4.


ՇՐՋԱՆԻ ԼԱՆՁՆԵՐԻ ԹԵՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

1 - Հարթավայրեր՝ 0-4 աստիճան թեքությամբ

Նկար 5.




Նկար 6.

Սողանքային մարմնի կենտրոնի կոորդինատներն են. հյուսիսային լայնությունը՝ $39^{\circ} 58' 17''$ և արևելյան երկայնությունը՝ $44^{\circ} 38' 14''$:

Մարմինը գտնվում է 982մ բացարձակ բարձրության վրա, զբաղեցնում է մոտ 184հա տարածք (երկարությունը՝ 1300մ, լայնությունը՝ 1800մ):

Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի «Սեյսմակայուն շինարարություն. նախագծման նորմեր» N24-Ն հրամանի՝ հանքավայրի տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 300սմ/վրկ^2 կամ $0.3g$ գրունտի հորիզոնական արագացման մեծություն:

Համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի N 919-Ն որոշման հավելված 3-ի՝ ուժեղ երկրաշարժի դեպքում հանքավայրին մոտ գտնվող Արտաշատ բնակավայրում երկրաշարժի ուժգնությունը ըստ MSK-64 սանդղակի կկազմի 8 բալ:



Նկար 7.

- **Շրջանի կլիման**

Հանքավայրի շրջանը, իր ցածր հիպսոմետրական դիրքի շնորհիվ, բնութագրվում է արևային ճառագայթման զգալի ինտենսիվությամբ (նկար 8):

Կլիման չոր կտրուկ ցամաքային է, ցուրտ ձմեռներով և շոգ ամառներով: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 12°C, միջին ամսական ջերմաստիճանը հունվարին՝ -4.0°C, հուլիսին՝ 24.0°C: Միջին տարեկան բացարձակ մաքսիմումը կազմում է 41°C: Օդի 5.0°C օրական միջին ջերմաստիճանով ժամանակահատվածի տևողությունը կազմում է 270 օր, 10.0°C՝ 220 օր:

Տեղումների տարեկան միջին քանակը մոտ 300մմ է, 0.1մմ և ավելի տեղումներով օրերի թիվը կազմում է 70, իսկ 5մմ և ավելի տեղումներով օրերի թիվը՝ 10: Օդի տարեկան միջին հարաբերական խոնավությունը՝ 61%, հունվարին՝ 80%,

հուլիսին՝ 45%: Արևափայլի տարեկան տևողությունը հասնում է 2800 ժամի: Ռադիացիոն տարեկան հաշվեկշիռը կազմում է 62.0 կկալ/սմ²:

Շրջանին բնորոշ լեռնահարթավայրային քամիները առավել ուժեղ արտահայտվում են ամռան ամիսներին: Նրանց արագությունը երբեմն հասնում է մինչև 15 մ/վ: Ամռանը՝ Իրանից և Մերձկասպյան տարածքներից, մերթընդմերթ փչում են տաք, չոր քամիներ: Ձմռանը գերակշռում են թույլ քամիները:

Ստորև, աղյուսակ 4-9-ում ներկայացվում են տարածքի օդերևութաբանական տվյալները ըստ մոտակա Արտաշատ կայանի տվյալների (829մ բացարձակ բարձրություն):

Աղյուսակ 4.

Օդի ջերմաստիճանը ըստ ամիսների, °C											
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
-3.6	-0.9	5.6	12.7	17.5	21.5	25.3	24.8	19.8	13.0	6.0	-0.6

Բազմամյա դիտարկումների տվյալներով գրանցված միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է 11.8°C, բացարձակ նվազագույնը՝ -29°C, բացարձակ առավելագույնը՝ 43°C: Տարեկան միջին խոնավության ցուցանիշը կազմել է 64մմ, տարվա ամենացուրտ ամսվա միջին ամսական ժամը 15-ին՝ 64մմ, ամենաշոգ ամսվա միջին ամսական ժամը 15-ին՝ 32մմ:


Աղյուսակ 5.

Օդի խոնավությունը ըստ ամիսների, մմ											
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
78	73	63	58	59	54	51	52	57	68	73	79

Աղյուսակ 6.

Տեղամների քանակը միջին ամսական/օրական առավելագույն, մմ												
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	միջին
18	18	27	36	40	25	11	6	10	22	24	17	254
18	20	32	36	43	34	27	22	28	36	31	25	43

ՇՐՋԱՆԻ ԿԼԻՄԱՑԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
1 -Չոր ցամաքային կլիմայական գոտի

Նկար 8.

Աղյուսակ 7.

Զնաձաճկույթը		
առավելագույն տասնօրյա- կային բարձրությունը, սմ	տարվա մեջ ձնաձաճկույ- թով օրերի քանակը	ձյան մեջ ջրի առավելա- գույն քանակը, մմ
40	36	46

Աղյուսակ 8.

Ամիսները	Անհողմությունն ըի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների ընթացքում		
					20	50	100
Հունվար	0	2.0	2.5	32	31	35	38
Ապրիլ	0	2.7					
Հուլիս	0	3.2					
Հոկտեմբեր	0	2.2					

Քամիների կրկնելիությունը և միջին արագությունները

Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, հՊա	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ							
		Ուղղությունները							
		Հս	Հս-Արլ	Արլ	Հվ-Արլ	Հվ	Հվ-Արմ	Արմ	Հս-Արմ
920.2	հունվար	7	8	10	20	12	10	15	18
		1.7	1.7	2.7	3.1	2.4	2.0	2.2	1.7
	ապրիլ	4	9	12	27	13	8	13	14
		1.7	1.8	2.1	2.8	2.5	2.5	2.8	2.6
	հուլիս	8	7	9	16	9	9	18	24
		1.7	1.9	1.7	2.0	2.0	2.0	2.7	2.3
	հոկտեմբեր	7	12	12	19	8	10	16	16
		1.6	1.5	2.1	2.0	1.5	2.1	2.4	2.0

▪ **Մթնոլորտային օդ**

Ըստ մթնոլորտային օդի վիճակի՝ Արտաշատի տարածաշրջանը գնահատվում է որպես սահմանափակ-բարենպաստ: Մթնոլորտի օդերևութաբանական պոտենցիալը (ՄՕՊ), որը բնորոշում է դիտարկվող տարածքի մթնոլորտային օդի ինքնամաքրման ունակությունը, կազմել է 1.43: Շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի համակարգի շրջանակներում ազդակիր Արտաշատ և Բուրաստան բնակավայրերում մթնոլորտային օդի մշտադիտարկումներ չեն կատարվում:

Հանքավայրի տարածքում 2022 թվականի ապրիլ ամսին կատարված դիտարկումներով մթնոլորտային օդում արձանագրվել է. փոշի՝ 0.051մգ/մ³, ծծմբի երկօքսիդին՝ 0.0070մգ/մ³, ազոտի երկօքսիդին՝ 0.0042մգ/մ³ և ածխածնի օքսիդին՝ 0.11մգ/մ³:

▪ **Ջրային ռեսուրսներ**

Ավազակոպձային խառնուրդի արդյունահանման նպատակով հայցվող հանքավայրի տարածքը ծագումնաբանորեն կապված են Արաքս գետի հիդրոլոգիական ռեժիմի հետ: Արաքս գետի վրա եղած 4 հիդրոլոգիական դիտարկման կետերի 5-7 տարիների դիտարկման տվյալները ցույց են տվել, որ Արաքս գետը հանքավայրի շրջանում բնութագրվում է տարվա մեջ մեկ՝ զարնանային վարարումով, որն սկսվում է մարտի 15-20-ից և ավարտվում է հունիսի 15-30-ին՝

տնելով շուրջ 90-103 օր: Այս շրջանում ջրի ծախսը կազմում է միջինը 1690մ³/վրկ: Ջրի առավելագույն նվազումը տեղի է ունենում օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, երբ ջրի ծախսը նվազում է մինչև 16.6 մ³/վրկ: Տարեկան ջրի միջին ծախսը կազմում է 167 մ³/վրկ: Ջրի միջին տարեկան ծախսը կազմում է 86.2մ³/վրկ:


Արաքսի ջրերը հայտնի են պղտորության բարձր մակարդակով: Ջրի տարեկան պղտորությունը կազմում է միջինը 1200գր/մ³, բերվածքների միջին ծախսը 200կգ/վրկ: Գարնանային վարարման ժամանակ առավելագույն պղտորությունը կազմում է 26000 գր/մ³ և տևում է մեկ շաբաթ, բերվածքների ծախսը կազմում է 3100 կգ/վրկ:

Արաքս գետը սկիզբ է առնում Բյուրակն հրաբխային բարձրավանդակից (մոտ 3000մ բարձրությունից), մինչև Արարատյան դաշտ մտնելը հոսում է նեղ կիճերով, տեղ-տեղ՝ լայնացված հովտով, ունի մեծ անկում: Գետի երկարությունը 1720կմ է, ավազանը՝ 102 հազ.կմ²:

Հանքավայրի շրջանում Արաքս գետի ջրերի մոնիթորինգ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից իրականացվում է Հրազդան գետից թափման կետից ներքև և վերև (նկար 9, դիտակետեր 26 և 27): 2021 թվականի դեկտեմբերին կատարված դիտարկումների համաձայն նշվել են հետևյալ կոնցենտրացիաների գերազանցումները:

Աղյուսակ 10.

Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)										
	Ամոնիում իոն, ՍԹԿ=0.39 մգN/լ	Նիտրիտ իոն, ՍԹԿ=0.024մգN/լ	Մուլֆատ իոն, ՍԹԿ=100մգ/լ	Ցինկ, ՍԹԿ=0.01մգ/լ	Պղինձ, ՍԹԿ=0.001մգ/լ	Քրոմ, ՍԹԿ=0.001մգ/լ	Նիկել, ՍԹԿ=0.01մգ/լ	Մանգան, ՍԹԿ=0.01մգ/լ	Վանադիում, ՍԹԿ=0.001մգ/լ	Երկաթ, ՍԹԿ=0.5մգ/լ	Ալյումին, ՍԹԿ=0.04մգ/լ
Հրազդան գետի թափման կետից վերև (26)	5.3	4.2	1.2	1.6	8.2	10.4	-	6.6	19.0	2.5	23.5
Հրազդան գետի թափման կետից ներքև (27)	4.7	5.1	1.2	2.6	11.5	12.0	1.2	6.8	21.3	3.3	31.7




Նկար 9.

Գետը բնութագրվում է զարնանային վարարումով, որն սկսվում է մարտի 15-20-ից և ավարտվում է հունիսի 15-30-ին՝ տևելով շուրջ 90-103 օր: Այս շրջանում ջրի ծախսը կազմում է միջինը 925 մ³/վրկ: Ջրի առավելագույն նվազումը տեղի է ունենում օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, երբ ջրի ծախսը նվազում է մինչև 24 մ³/վրկ: Տարեկան ջրի միջին ծախսը կազմում է 167մ³/վրկ: Արաքսի ջրերը հայտնի են պղտորության բարձր մակարդակով: Ջրի տարեկան պղտորությունը կազմում է միջինը 1200գր/մ³, բերվածքների միջին ծախսը 200կգ/վրկ: Գարնանային վարարման ժամանակ առավելագույն պղտորությունը կազմում է 26000գր/մ³ և տևում է մեկ շաբաթ, բերվածքների ծախսը կազմում է 3100կգ/վրկ: Այդ բերվածքները լինում են հատիկային և կախությային: Հատիկային նստվածքները բաղկացած են ապարների տարբեր ֆրակցիաների հատիկներից, որոնք էլ կախված գերակշռող ֆրակցիայից առաջացնում են ավազակոպճային խառնուրդի կամ ավազի կուտակներ: Կախությային բերվածքները առաջացնում են կավային և տիղմային նստվածքներ, որոնք բաղկացած են 0.1-1մմ և ավելի փոքր չափսերի հատիկներից: Արաքսի ավազանի նմանատիպ օբյեկտների (մասնավորապես Շահումյանի ԱԿԽ-ի հանքավայրի) շահագործման փորձը վկայում է, որ տեղամասի պաշարները վերականգնվող են, ինչը կապված է Արաքս գետի մեկ՝ գարնանային վարարման հետ:

Գետառողողատային տիպի հանքավայրերի վերականգնվող պաշարների գնահատման մեթոդական ցուցումների համաձայն, տեղամասի վերականգնվող պաշարների համար նպատակահարմար է ընդունել 1 միավոր վերականգնման գործակից: Արաքս գետի ջրերը քիմիական տեսակետից ագրեսիվ չեն բետոնի, մետաղի և այլ շինանյութերի հանդեպ: Դրա մասին են վկայում գետի վրա կառուցված բազմաթիվ հիդրոտեխնիկական կառույցները և գյուղատնտեսական ոռոգման նպատակով այդ ջրերի օգտագործման դարավոր փորձը:

Արաքս գետը հոսում է Գետամեջի հանքավայրի հայցվող տարածքից 95-100մ, Ազատ գետը՝ 32-103մ հեռավորությունների վրա (նկար 10): Հայցվող տարածքը հյուսիսից, հյուսիս-արևելքից սահմանակցում է պաշտպանիչ արգելաթմբին:



Նկար 10.

▪ **Հողեր**

Նկարագրվող տարածքում զարգացած են մնացորդային մարգագետնային ոռոգելի և աղուտ-ալկալի հողեր, որոնք հանդես են գալիս ժամանակակից այրուվիալ-դելյուվիալ նստվածքների (Արաքս գետի բերվածքների) հետ միախառնված (նկար 11):

Մնացորդային մարգագետնային գորշ ոռոգելի հողերը տարածված են Արարատյան դաշտի համեմատաբար ցածրադիր թույլ թեք հարթություններում, որոնք ընկած են ծովի մակերևույթից 800-950մ բարձրությունների վրա և կապված են Արաքս գետի հինավուրց դարավանդների հետ:

Այս հողերի ստրուկտուրան փոշեհատիկա-կնձիկային է, հիմնականում կարբոնատային են:


Հողերի զարգացումն ընթանում է ստորգետնյա ջրերի մշտական ազդեցության պայմաններում, որոնք ունեն 1-3, իսկ որոշ դեպքերում՝ 5մ խորություն: Դրանք ունեն չգատորոշված պրոֆիլ, կլանման բարձր ծավալ, թույլ հիմնային ռեակցիա, կարբոնատների նվազ պարունակություն: Հողերը թույլ ագրեգացված են, միջին շերտերում նկատվում է ամրացվածություն:

Աղուտ-ալկալի հողերը առաջացել են Արարատյան դաշտում ստորգետնյա ջրերի բարձր մակարդակի (1-2մ) պայմաններում: Հողերն աչքի են ընկնում խիստ թույլ հումուսացվածությամբ (մինչև 1%), բարձր հիմնայնությամբ, կարբոնատների զգալի պարունակությամբ (15-18%), շերտավոր մեխանիկական կազմով:

Պրոֆիլում պարզորոշ առանձնացվում է մակերեսային աղային հորիզոններ, որտեղ հեշտ լուծվող աղերի քանակը 2% և ավելի է, սակայն դեպի ստորին շերտերը նրա պարունակությունը նվազում է: Հողերի գերակշռող մասին հատկանշական է փոխանակային նատրիումի բարձր պարունակությունը (առանձին շերտերում՝ 20-25մգէկվ):

Հայցվող տարածքում աղուտ-ալկալի հողերի հստակ տարանջատված հորիզոն չի ձևավորվել: Այստեղ ափամերձ ժամանակակից այրուվիալ-դելյուվիալ նստվածքների առանձին հատվածները ծածկված են առավելագույնը 0,1մ հզորությամբ աղուտ-ալկալի հողերով: Սակավ հզորությամբ հողային ծածկույթ ունեցող հատվածները կազմում են հայցվող տարածքի մոտ 30 տոկոսը:

Հողային ծածկույթ ունեցող հատվածներից 2022թ. ապրիլին կատարվել է նմուշառում: 3 նմուշների վերլուծության արդյունքում ստացվել են հետևյալ միջինացված ցուցանիշները. սիլիցիում- 102421մգ/կգ, մանգան-971մգ/կգ, ֆոսֆոր- 957մգ/կգ, պղինձ-1.37մգ/կգ, նիկել-0.097մգ/կգ և ցինկ-11.3մգ/կգ:




Նկար. 11

▪ **Բուսական և կենդանական աշխարհ**

Գետամեջի հանքավայրի շրջանի բնական բուսածածկը ներկայացված է հիմնականում անապատային աղասեր տեսակներով՝ *Salsola ericoides* Beib., *Salsola dendroides* Pall., *Salsola nitraria* Pall., *Halocnemum strobilaceum* մասնակցությամբ (սխեմատիկ քարտեզը ներկայացված է նկար 12-ում): Բուն հանքավայրի տարածքում՝ դիտարկվել են ծներեկի, բադախոտի, եղեգի և կեռոնի առանձին կղզյակներ, ինչը պայմանավորված է նրանով, որ հողային շերտը հանքավայրի տարածքում հանդես է գալիս առանձին հատվածներով: Հայցվող տարածքի մակերեսի շուրջ 70%-ը ներկայացված է այուրվիալ-դեյուրվիալ բերվածքներով: Արաքսի վարարման

ժամանակ տարածքը ամբողջությամբ ծածկվում է ջրով, տեղի է ունենում ավազի նստվածքագոյացում:

Հայցվող տարածքում նշվել են 60-90սմ բարձրությամբ ուռենու և բարդու համապատասխանաբար 3 և 5 բարակ շիվեր:



Նկար. 12

Բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակներից հանքավայրի շրջանում հայտնի են հետևյալ տեսակները.

- գինեծաղիկ գազատերն – կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է, աճում է ծ. մ. 800-1000 մ բարձրության վրա, գետերի և ջրանցքների ափերին,
- գազ Շելկովնիկովի – կրիտիկական վիճակում գտնվող տեսակ, աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 900-1200 մ բարձրությունների վրա, չոր տեղերում՝ փուխր և ավազոտ մակերեսով, անապատում, կիսաանապատում,
- գազ Սուկաչովի – խոցելի տեսակ, աճում է միջին լեռնային գոտում, ծ.մ. 1200-2000մ բարձրությունների վրա, կրաքարային և խճաքարքարոտ լանջերին՝

կիսասանապատային բուսականության կազմում, կաղնու և գլխուն նոսրանտառներում,

- միկրոկենտոմ մարզանանման- վտանգված տեսակ է, հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա: Հանդիպում է Բուրաստան գյուղի շրջակայքում: Աճում է ստորին լեռնային գոտում ծ.մ. 800-850մ բարձրությունների վրա, աղակալած ճահիճներում և աղուտներում:

Հանքավայրից հայցվող տարածքում մանրագնին ղիտարկման արդյունքում վերը նշված՝ ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված բուսատեսակները չեն ղիտարկվել:

Տարածքներում հանդիպում են ամենուր զարգացած ողնաշարավորներից՝ լճագորտ, մողես, սովորական լորտու, տնային ճնճղուկ, մոխրագույն ագռավ, կաչաղակ, սովորական և հասարակական դաշտամուկ, մոխրագույն առնետ, անողնաշարավորներից՝ անձրևորդ, մրջյուն, մեղու, ծղրիդ, ճոխկ, մորեխ, փայտոջիլ, կապտաթիթեռ, մոծակ, սենյակային և դաշտային ճանճեր:

Գետի ջրերում հանդիպում են թեփուկ, ճանառ, լոք, կամրմրախայթ:

Արաքս գետն ունի կարևոր օրնիթոլոգիական նշանակություն: Թռչունների ամենամեծ կուտակումները տեղի են ունենում «Խոր վիրապ» պետական արգելավայրի և Արմաշ բնակավայրի սահմանամերձ տարածքներում: Այստեղ յուրաքանչյուր տարի բնադրում են փոքր ձկնկուլը, քաջահավը, տառեղը, տարգալակտուցը, մկնաճուռակը: Հանդիպում են միգրացիոն ջրլող թռչուններ՝ կարապներ, բադեր, սագեր, իսկ մշտական բնադրող տեսակներից են արագիլները, ճահճային տեսակները, ագռավագլխերը:

Կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակներից հանքավայրի տարածաշրջանում հայտնի են.

- ուբադչի ճպուռ- սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է, որը հանդիպում է Բուրաստան գյուղի շրջակայքում՝ ավազային, տղմոտ հատակով գետերում:

- սիմպեկտա ճպուռ – հազվագյուտ տեսակ, հայտնի է լճացված ջրերով ջրամբարներում, պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում:

- անդրկովկասյան տակիրային կլորագլուխ – խիստ սակավաթիվ, անհետացող, կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Բնակվում է նոսր քսերոֆիտ (չորասեր) բուսածածկով ավազուտային և աղուտային կիսաանապատներում՝ ափիլեյան, աղուտային, տեղ-տեղ օշինդրային բուսականության առկայությամբ, 800-1050 մ ծ.մ. բարձրության վրա: Պահպանվում է «Գռռավանի ավազուտներ» և «Որդան կարմիր» արգելավայրերում;

- ոտնացուպիկ- խոցելի տեսակ է, Հայաստանում հիմնականում բնադրում է Արարատյան հարթավայրում, նախընտրում է կանգնած, դանդաղահոս ջրերը նոսր բուսայանությամբ:

- փոքր ճագարամուկ- Արարատյան հարթավայրի նեղ արեալային էնդեմիկ տեսակ է, խիստ մասնատված արեալով: Այն տարածված է Արարատի մարզում 800-1200մ բարձրությունների վրա: Սովորաբար հանդիպում է կավային և խճաքարային կիսաանապատներում, աղուտներում և փոքր ավազուտներում:

- կանաչ մեղվակեր- հազվագյուտ տեսակ է սահմանափակ արեալով, տարածված է Արարատյան հարթավայրի կիսաանապատային տեղանքներում:

- սև անգղ – վտանգված տեսակ, բնադրում է լեռնաշղթաների համեմատաբար փոքր թեքություն ունեցող լանջերի լեռնատափաստանների տեղամասերով հերթափոխվող գիհու արիդային նոսրանտառների սահմաններում, սովորաբար, 1200-2000 մ ծ.մ. բարձրություններում: Պահպանվում է «Խոսրովի անտառ» արգելոցում, որտեղ կանոնավոր բնադրում է;

- տափաստանային մկնաճուռակ – վտանգված տեսակ, բնադրում է լեռնատափաստաններում, լայնարձակ հարթավայրային հովիտներում, սովորաբար, 800-2000 մ ծ.մ. բարձրություններում: Պահպանվում է «Սևան» ազգային պարկում;

- կարմրաոտ բազե – անհետացող տեսակ: Բնակվում են լայնատարած կիսաանապատային և տափաստանային տեղամասերում անտառակների կամ ծառերի առանձին խմբերի առկայությամբ, հաճախ գետերի հովիտներում կամ այլ ջրամբարների հարևանությամբ, երբեմն՝ նոսրանտառներում և անտառեզրերում, լեռներում՝ մինչև 1500 մ ծ.մ.բ. բարձրություններում:

2022 թվականի ապրիլին հայցվող տարածքում կատարված դիտարկումների ժամանակ վերը նշված՝ ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների բնադրավայրեր չեն հայտնաբերվել:

▪ ***Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ***

Գետամեջի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի սահմաններում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան:

Հանքավայրից մոտ 11կմ հեռավորության վրա է գտնվում «Խոր Վիրապ» պետական արգելավայրը, որը ստեղծվել է 2007 թվականին խոնավ տարածքի էկոհամակարգի, դրա բաղադրիչների, բուսական ու կենդանական տեսակների պահպանության, բնականոն զարգացման, վերարտադրության ու կայուն օգտագործման նպատակով:

«Խոր Վիրապ» պետական արգելավայրը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Փոքր Վեդու գյուղական համայնքի վարչական սահմաններում, Արաքս գետի ձախակողմյան մասի Խոր Վիրապ եկեղեցական համալիրի և Հայաստանի հնագույն մայրաքաղաք Արտաշատի աջակողմյան հատվածում գտնվող՝ 50.28 հեկտար խոնավ տարածքի վրա:

Արգելավայրի կազմակերպման հիմնական նպատակը միջազգային նշանակություն ունեցող խոնավ տարածքի էկոհամակարգի, բուսական ու կենդանական աշխարհի՝ հատկապես ջրլող թռչունների ու դրանց ապրելավայրերի, հազվագյուտ բուսատեսակների ու դրանց աճելավայրերի պահպանության, բնականոն զարգացման, վերարտադրության ու կայուն օգտագործման ապահովումն է:

Արգելավայրի հատուկ պահպանության օբյեկտները Մերձարաքսյան խոնավ տարածքի էկոհամակարգի յուրահատուկ կենդանական աշխարհն ու ջրաճահճային բուսականությունն են:

Արգելավայրի վրա բացասական ներգործություն ունեցող տնտեսական գործունեությունը սահմանափակելու կամ արգելելու նպատակով 100 մետր լայնությամբ շրջագծով տարածքը սահմանվում է որպես պահպանական գոտի:

«Խոր վիրապ» պետական արգելավայրի ջրաճահճային տարածքներում արձանագրվել են Կենդանիների կարմիր գրքում գրանցված վարդագույն և գանգրափեթուր հավալուսնը, փոքր ձկնկուլը, թշնան կարապը, մոխրագույն սագը, կարմիր բադը, սպիտակաաչք սուգաբադը, ծովային քարադրը, սպիտակապոչ եղջյուրիկը, որորակտուց ջրածիծաղը, սոխականման ճռիկահավը:

Հայցվող տարածքից մոտ 21կմ հեռավորության վրա գտնվում է «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրը: Բնության հատուկ պահպանվող տարածք է, արգելավայրը ստեղծվել է 1959 թ-ին, ՀՍՍՀ ՄՍ հունվարի 29-ի N 20 որոշմամբ՝ 200 հա տարածքի վրա: Այն գտնվում է Արարատի մարզի, Արարատյան գոգավորության թեք հարթություններում, Գոռավան գյուղական համայնքի հարավ-արևելյան մասում ծովի մակարդակից 920-980 մ բարձրության վրա: «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրի կանոնադրությունը և տարածքի չափը հաստատվել են ՀՀ կառավարության 2007 թ. հունվարի 25-ի «Խոր Վիրապ» պետական արգելավայր ստեղծելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թ. մայիսի 30-ի N 925-Ն որոշման մեջ լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին N 975-Ն որոշմամբ: Համաձայն այդ որոշման, «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրը, առանց պետական արգելավայրի կարգավիճակի փոփոխության, հանձնվել է ՀՀ բնապահպանության նախարարության «Խոսքովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ ենթակայությանը՝ պահպանության և վերականգնման աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով: ՀՀ կառավարության 2011 թ. մարտի 31-ի N324-Ն որոշմամբ հաստատվել է «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրի սահմանների նկարագիրը և հատակագծի սխեման: Ներկայումս արգելավայրը զբաղեցնում է 95,99 հա տարածք: Արգելավայրը ձևավորվել է Արարատյան հարթավայրի Ուրծի լեռնաշղթայի հյուսիսարևմտյան լանջերի ռելիեֆային ալյուվյալ նստվածքների մի քանի տեղամասերի վրա: Արգելավայրի վրա բացասական ներգործություն ունեցող տնտեսական գործունեությունը սահմանափակելու կամ արգելելու նպատակով 100 մ լայնությամբ շրջագծով տարածքը սահմանվել է որպես պահպանման գոտի:

«Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրի պահպանության օբյեկտն է Անդրկովկասում բնական ջուզգունի գեղածնկիկ մատիտեղանմանի (*Calligonum*

polygonoides) միակ ամբողջական աճման էկոհամակարգը, մնացորդային սորուն ավազներ իր յուրօրինակ ֆլորայի և ֆաունայի էնդեմիկ, հազվագյուտ և անհետացող տեսակներով: Տարածքը պատկանում է Հայաստանի Երևանյան ֆլորիստիկ շրջանին: Արգելավայրի բուսականության հիմնական տիպը ավազային ջուզգունային անապատն է : Սա միակ տեղամասն է Փոքր կովկասում , որտեղ ներկայացված են ջուզգունի համակեցությունները, և խիստ հազվագյուտ է ողջ Կովկասի համար: Արգելավայրը Երևանի ֆլորիստիկ շրջանի հազվագյուտ տեսակներով ամենահարուստ տարածքն է, որն անոթավոր բույսերի հազվագյուտ և անհետացող տեսակների թվաքանակով Հայաստանում գտնվում է առաջին տեղում:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ են համարվում նաև բնության հուշարձանները, որոնց ցանկը ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը :

ՀՀ Արարատի մարզում հաշվառված են բնության հետևյալ հուշարձանները.

Աղյուսակ 11.

Հ/Հ	Անվանումը	Տեղադիրքը
1	2	3
1.	«Անձավիկ» քարանձավ	Վեդի քաղաքից մոտ 20 կմ հս-արլ, Ուխտուակունք գետի աջ ափին, Դարբանդ գետի հետ միախառնման տեղից 08 կմ հոսանքով վեր, 40 մ գետի հունից բարձր, ծ.մ-ից 2100 մ բարձրության վրա
2.	«Դաշտաքար» քարանձավ	Դաշտաքար գյուղից 0,2 կմ հվ, Անահավատքար լեռան հս լանջին, հիմքից 400 մ բարձրության վրա
3.	«Մեծ հոր» համակարգ անձավային համակարգ»	Շաղափ գյուղից 3 կմ հս-արլ, ծ.մ-ից 2200 մ բարձրության վրա
4.	«Անանուն» շերտավոր նստվածքներ	Տիգրանաշեն-Պարույր Սևակ գյուղերի ճանապարհի 17-րդ կմ-ի վրա
5.	«Անանուն» անտիկլինալ ծալք	Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
6.	«Անանուն» ծալքավոր ստրուկտուրա	Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
7.	«Անանուն» ծալքազոյացման մերկացում	Ուրցաձոր գյուղից 4,5 կմ դեպի հս, Վեդի գետի աջ ափին

1	2	3
8.	«Հորթունի» բրածո ֆլորա	Զանգակատուն գյուղից 8 կմ հս-արլ
9.	«Ջերմանիսի» բրածո ֆլորա	Ուրցաձոր գյուղից մոտ 20 կմ գետի հոսանքով վեր, նախկին Ջերմանիս գյուղատեղիի մոտակայքում
10.	«Վեղի գետի ավազանի» բրածո ֆաունա	Վեղի գետի ավազան, Ուրցաձոր գյուղից 15 կմ հս-արլ
11.	«Աղակալած ճահճուտ»	քաղ. Արարատ, հանքային աղբյուրների մոտ, ծ.մ-ից մոտ 850 մ բարձրության

Ավազակոպճային խառնուրդի արդյունահանման նպատակով հայցվող տարածքներին ամենամոտ գտնվող բնության հուշարձանը «Աղակալած ճահճուտ» կենսաբանական հուշարձանն է, որը գտնվում է հայցվող տարածքից մոտ 24կմ հեռավորության վրա:

3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

- **Ենթակառուցվածքներ**

Գետամեջի ԱԿԽ հանքավայրը տարածական առումով գտնվում է ՀՀ Արարատի մարզում:

Մարզի ընդհանուր տարածքը՝ 2090.03 քկմ է, կազմում է Հայաստանի Հանրապետության տարածքի մոտ 7 %-ը:

Մարզն ունի շուրջ 256.6 հազար բնակչություն, որից 72.0 հազ. քաղաքաբնակներ են (28%), 184.6 հազարը՝ գյուղաբնակ (71%): Մարզը բնակչությամբ համարյա միատարր է, հիմնականում բնակեցված է հայերով՝ 93%, ազգային փոքրամասնություններից մարզում ապրում են եզդիներ 2.5%, ասորիներ 0,09%, քրդեր 0.05%, ռուսներ 0.4%:

01.01.2021թ. դրությամբ մարզի մշտական բնակչությունը ըստ տարածաշրջանների հետևյալն է՝ Արարատ 20.4 հազար մարդ, Արտաշատ 19.1 հազար մարդ, Մասիս 20.7 հազար մարդ, Վեդի 11.8 հազար մարդ:

Արարատի մարզում բնակչության տեղաբաշխումը հավասարաչափ չէ, ամենամեծ կուտակումը մարզում Արտաշատի և Մասիսի տարածաշրջաններում են՝ հիմնականում հարթավայրային մասում դեպի մայրաքաղաքի ուղղությամբ, դեպի նախալեռնային և լեռնային բնակավայրեր՝ բնակչության խտությունը կտրուկ նվազում է:

Արարատի մարզում տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 69.3%, որը հանրապետական միջին ցուցանիշից բարձր է 6.8%-ով: Տարբերություններ կան տղամարդկանց (71.7%) և կանանց (65.2%), ինչպես նաև քաղաքային (44%) և գյուղական (82%) տարածքների միջև: Համեմատած Արմավիրի մարզի հետ տնտեսական ակտիվության մակարդակը բարձր 1.7%-ով:

ՀՀ Արարատի մարզում առկա են 7087 գործող (ակտիվ) ձեռնարկություններ, որը կազմում է հանրապետության մարզային ցուցանիշի 11.6%-ը, 10000 բնակչի հաշվով ձեռնարկությունների թիվը կազմում է 274, իսկ Արմավիրի մարզում առկա են 9087 գործող (ակտիվ) ձեռնարկություններ, որը կազմում է հանրապետության մարզային ցուցանիշի 14.9%-ը, 10000 բնակչի հաշվով ձեռնարկությունների թիվը կազմում է 341: Ինչպես և ՀՀ բոլոր մարզերում այստեղ նույնպես ձեռնարկությունների

գերակշռող մասը ունի մի քանի աշխատող և կարող են համարվել ՓՄՁ ձեռնարկություններ:

Մարզի տնտեսության հիմնական ցուցանիշներն ըստ ՀՀ տնտեսության ճյուղերի հետևյալն են՝

արդյունաբերություն՝ 12.9 %, գյուղատնտեսություն՝ 14.1 %, շինարարություն՝ 2.1 %, մանրածախ առևտուր՝ 2.7 %, ծառայություններ՝ 1.6 %:

Մարզը Հայաստանի արդյունաբերական և գյուղատնտեսական առաջատարներից է՝ այստեղ մեկ շնչի հաշվով արտադրվող արդյունաբերական արտադրանքը ավել է քան ՀՀ միջին ցուցանիշը շուրջ 1.5 անգամ, իսկ գյուղատնտեսական արտադրանքը շուրջ 1.6 անգամ, այլ ոլորտներում մարզը զգալիորեն զիջում է ՀՀ միջին ցուցանիշներին:

Արդյունաբերություն Արարատի մարզը Հայաստանի Հանրապետության զարգացած արդյունաբերական մարզերից է: ՀՀ արդյունաբերության ծավալի 12.9 %-ը կազմում է Արարատի մարզի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքը: Արարատի մարզի տնտեսության մեջ էական կշիռ ունեն գինու-կոնյակի 10-ից ավելի խոշոր գործարանները, “Արարատ – ցեմենտ”, “Ոսկու կորգման ֆաբրիկան”, Արտաշատի, Արարատի պահածոների, “Մասիս տոբակո”, “Ինտերնեշնլ Մասիս տոբակո” գործարանները:

Արդյունաբերության առաջատար ուղղությունները սննդամթերքի, ներառյալ՝ խմիչքների, արտադրություններն են և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը:

Մարզի բազմաճյուղ արդյունաբերության հիմնական և գլխավոր ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ 3 ճյուղերը.

- 1) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքների արտադրություն)
- 2) ծխախոտի արտադրություն (ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա)
- 3) ոչ մետաղական հանքային արտադրանքի արտադրություն (ցեմենտի, կրի, ազբոցեմենտային իրերի արտադրություն, քարի կտրում և վերամշակում):

Մարզի արդյունաբերական արտադրության 92.3%-ը բաժին է ընկել մշակող արդյունաբերությանը, որը հիմնականում գյուղմթերքի վերամշակությունն է և որը

մեծապես պայմանավորված է մարզում գյուղատնտեսական բարձր արտադրողականությանը:

Արդյունաբերական արտադրանքի ծավալների վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 12-ում:

Աղյուսակ 12.

	Թողարկ- ված ար- տադրանքի ծավալը, ընթացիկ գներով, ¹ մլն.դրամ Volume of produced production, in current prices ¹ , mln.drams	Պատրաստի արտադ- րանքի իրացումը, ընթացիկ գներով, ¹ մլն.դրամ Realisation of fabricated products in current prices ¹ , mln.drams	Արտա- դրանքի ֆիզիկա- կան ծավալի ինդեքսը, % Volume index of of industrial production, %	
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ARARAT MARZ				
Ամբողջ արդյունաբերությունը	301 033.5	327 001.2	98.7	Total industry
այդ թվում՝				including:
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	1 694.0	2 420.2	138.0	Mining and quarrying
այդ թվում՝				including:
հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր	1 694.0	2 420.2	138.0	other mining and quarrying
Մշակող արդյունաբերություն	287 847.8	313 089.4	98.5	Manufacturing
որից՝				of which :
սննդամթերքի արտադրություն	48 796.9	48 236.1	118.3	manufacture of food products
խմիչքների արտադրություն	27 585.6	28 214.6	82.1	manufacture of beverages
ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	69 105.1	68 774.8	86.6	manufacture of tobacco products
հագուստի արտադրություն	738.4	832.5	104.6	manufacture of wearing apparel
թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն	18 376.7	18 579.5	87.0	manufacture of paper and paper products
քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն	346.0	345.7	119.3	manufacture of chemicals and chemical products
ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	984.3	1 222.4	105.4	manufacture of rubber and plastic products
այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	23 032.5	23 285.4	127.2	manufacture of other non-metallic mineral products
հիմնային մետաղների արտադրություն	96 833.8	121 717.2	102.5	manufacture of basic metals
Էլեկտրականության, գազի, ջուրի և լավորակ օդի մատակարարում	10 012.8	10 012.8	101.0	Electricity, gas, steam, and air conditioning supply
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերաշահում	1 478.9	1 478.9	93.3	Water supply, sewerage, waste management and remediation activities

Գյուղատնտեսություն. Արարատի մարզի տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է՝ այն հիմնականում մասնագիտացած է պտղաբուծության, խաղողագործության, բանջարաբուծության մեջ: Արարատի մարզի հարթավայրային և նախալեռնային գոտիները նպաստավոր են բուսաբուծության, իսկ լեռնային գոտիները՝ անասնապահության զարգացման համար: Մարզի ազգաբնակչության 71.5% բնակվում է գյուղական վայրերում, որոնց կենսունակությունը պայմանավորված է գյուղատնտեսական գործունեությամբ:

Մարզի գյուղատնտեսական հողատեսքերը՝ ներառյալ տնամերձերը՝ 164 696 հա, կազմում են մարզի ընդհանուր տարածքի 78.8%-ը: Գյուղատնտեսական հողատեսքերի 7.6%-ը կազմում են մշակովի տարածքները՝ ներառյալ տնամերձերը 42 260 հա:

Մարզի ակտիվ գյուղատնտեսական ուղղվածության ձեռնարկությունները 31- են, որոնցից 6-ը զբաղվում են կաթի վերամշակմամբ, 2-ը՝ մսի, մնացած 23-ը՝ բուսաբուծական մթերքների վերամշակմամբ: Վերամշակող կազմակերպությունների կողմից Արարատի մարզում ավելացել են 24.4%-ով, հանրապետությունում՝ 44.6%-ով:

Մարզից արտահանվում է հիմնականում գյուղմթերքի վերամշակումից ստացված արտադրանք՝ գինի, կոնյակ, միրգ, բանջարեղեն, պահածոյացված գյուղմթերք՝ և հանրապետությունու և հանրապետությունից դուրս մեծ պահանջարկ ունեն Արարատի մարզի քաղցրահամ մրգերը, բարձարեղենը, մուրաբաները, բնական հյութերը, չրերը: Մարզի արտահանման մեջ մեծ ծավալներ են կազմում բնական հանքաքարերի արտահանումը:

Գյուղատնտեսական համախառն արտադրանքը կազմել է 125.0մլն.դրամ, որից բուսաբուծությունը՝ 94.0մլն. դրամ, անասնաբուծությունը՝ 31.0մլն.դրամ:

Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքսատարածությունը կազմել են 2568հա, միջին բերքատվությունը՝ 37.3g/հա, խամախառն բերքը՝ 9.6հազ.տ:

Կարտոֆիլի ցանքսատարածությունը կազմել են 508հա, միջին բերքատվությունը՝ 285.1g/հա, խամախառն բերքը՝ 14.5հազ.տ:

Բանջարանոցային մշակաբույսերի համար վերը նշված ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 5110հա, 400.2g/հա և 227.1հազ.տ, բոստանային

մշակաբույսերի համար՝ 981հա, 382.7g/հա և 37.5հազ.տ, պտղի և հատապտղի տարածությունների դեպքում՝ 8661հա, 98.7g/հա և 75.7հազ.տ:

Խաղողի տնկարկների տարածքությունները կազմել են 4849հա, միջին բերքատվությունը՝ 272.3g/հա, խամախառն բերքը՝ 123.7հազ.տ:

Խոշոր եղջրավոր կենդանիների գլխաքանակը կազմել է 45.4հազ.գլուխ, այդ թվում կովեր՝ 14.4հազ.գլուխ, խոզեր 21.7հազ.գլուխ, ոչխարներ և այծեր՝ 100.5հազ.գլուխ, ձիեր՝ 0.9հազ.գլուխ:

Իրականացվել է 24106.2մլն.դրամի շինարարություն և 23114.1մլն.դրամի շինմոնտաժային աշխատանքներ:

▪ ***Հողերի տնտեսական յուրացման բնութագիր***

Հայցվող տարածքը ներառված է Արտաշատ խոշորացված համայնքի Բուրաստան բնակավայրի վարչական տարածքում:

Գյուղն ունի 480 տնտեսություն: Ունի դպրոց, կապի հանգույց: Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է, համախառն բերքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը:

Զբաղվում են այգեգործությամբ, խաղողագործությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ:

Մշակում են ջերմասեր բանջարաբուստանային կուլտուրաներ՝ լոլիկ, տաքդեղ, սմբուկ, ձմերուկ, սեխ, ինչպես նաև հացահատիկ:

Զբաղվում են նաև կաթնամսատու անասնապահությամբ, մեղվաբուծությամբ:

Պահուստային հողերը նույնպես յուրացվում են որպես այգիներ, վարելահողեր: Արդյունաբերության մեջ զարգացած է սննդի արդյունաբերությունը, ունի գինու և կոնյակի հումքի գործարաններ:

Բնակավայրի հողային ֆոնդի վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփված է աղյուսակ 13-ում, ռոոզվող հողերի վերաբերյալ՝ աղյուսակ 14-ում:

Հ/Հ	Նպատակային նշանակություն	Հոդատեսք, գործառնական նշանակություն	Ընդամենը
1	2	3	4
1.1	1. Գյուղատնտեսական	վարելահողեր	328.74
1.2		բազմ տնկարկներ	21.87
1.2.1		այդ թվում	16.53
1.2.2		խաղողի այգի	5.34
1.2.3		այլ բազմամյա	
1.3		խոտհարք	90.58
1.4		արոտ	
1.5		այլ հողատեսքեր	311.12
1		ընդամենը	752.31
2.1	2. Բնակավայրերի	բնակելի	85.46
2.1.1		այդ թվում	85.44
2.1.2		այգեգործական	
2.2		հասարակական	1.74
2.3		խառը	
2.4		ընդհանուր	16.16
2.5		այլ հողեր	3.54
2		ընդամենը	106.90
3.1	3. Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտ. Նշանակության օբ.	արդյունաբերական	0.10
3.2		գյուղատնտեսական	12.37
3.3		պահեստարանների	
3.4		ընդերք	
3		ընդամենը	12.48
4.1	4. Էներգետիկայի, տրասպորտի, կապի, կոմունալ ենթակ. օբ.	էներգետիկայի	0.02
4.2		կապի	
4.3		տրանսպորտի	7.28
4.4		կոմունալ	0.07
4		ընդամենը	7.37
5.1	5. Հատուկ պահպանվող տարածքներ	բնապահպանական	
5.1.1		այդ թվում	
5.1.2		արգելոցներ	
5.1.2		ազգային պարկ	
5.1.3		առողջարանական	
5.2		հանգստի	1.06
5.3		պատմական և	5.06
5.4		մշակութային	
5		ընդամենը	6.12
6	Հատուկ նշանակության	Ընդամենը	11.18

1	2	3	4
7.1	7. Անտառային	անտառ	
7.2		թփուտ	
7.3		վարելահող	
7.4		խոտհարք	
7.5		արոտ	
7.6		այլ հողեր	
7		ընդամենը	
8.1	8. Ջրային	գետեր	47.60
8.2		ջրամբարներ	
8.3		լճեր	
8.4		ջրանցքներ	6.77
8.5		հիդրոտեխ. և ջրատնտեսային	22.97
8		ընդամենը	77.34
9.1	9. Պահուստային	աղբյուրներ	
9.2		ավազուտներ	
9.3		ճահիճներ	
9.4			
9.5		այլ անօգտագործելի	
9		ընդամենը	
Ընդամենը հողեր			973.70

Աղյուսակ 14.

Հ/Հ	Նպատակային նշանակության	Գործառնական նշանակության, հողատեսք	Ընդամենը ոռոգվող հողեր
1.1	1. Գյուղատնտեսական	վարելահող	188.0
1.2		բազմամյա տնկարկներ, ընդամենը	21.9
1.2.1		այդ թվում պտղատու	16.5
1.2.2		խաղողի այգի	5.3
1.2.3		այլ	
1.3		խոտհարք	
1.4		արոտ	
1.5		այլ հողատեսքեր	
1		ընդամենը	209.9
2.1	2.Բնակավայրերի	բնակելի կառուցապատման	70.9
2.1.1		այդ թվում տնամերձ հողեր	70.9
2.1.2		այգեգործական	
2.2		ընդհանուր օգտագործման	
2.3		այլ հողեր	
2		ընդամենը	70.9
Ընդամենը ոռոգվող հողեր			280.8

Ավագակոպչային խառնուրդի կուտակի արդյունահանման նպատակով հայցվող տարածքը ներկայացված է համայնքային սեփականություն հանդիսացող և վարձակալված գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերով՝ այլ հողատեսքերով:

Օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների վերաբերյալ տվյալները և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը ներկայացվել են համայնքի բնակիչներին, քննարկվել է ծրագրավորվող աշխատանքներում բնակիչների ներգրավման, ինչպես նաև համայնքին սոցիալական աջակցության ծրագրերի իրականացման հարցը:

▪ **Պատմության, մշակութային հուշարձաններ**

ՀՀ կառավարության 2002 թվականի հունվարի 22-ի թիվ 65-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ Արարատի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը:

Բուրաստան բնակավայրի տարածքում են գտնվում՝

Աղյուսակ 15.

Հուշարձանը	Ժամանակը	Գտնվելու վայրը
1. Գերեզմանոց	18-20դդ.	հարավային եզրին
2. Եկեղեցի Ս. Աստվածածին	19դ.	հարավային մասում
3. Եկեղեցի Ս. Հակոբ	1642թ.	հարավ-արևմտյան եզրին
4. Հուշարձան Երկրորդ Աշխարհամարտում զոհվածներին	1971թ.	գյուղի մեջ

Գետամեջի ավագակոպչային խառնուրդի հանքավայրի հայցվող տարածքի և Բուրաստան գյուղի պատմության, մշակույթի հուշարձանների միջև հեռավորությունը կազմում է մոտ 2.6-4.27կմ:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գետամեջի հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա դրսևորվող տեխնածին ճնշումների նախնական նկարագիրը ներկայացված է ստորև:

Մթնոլորտային օդ.

Լեռնային աշխատանքների հետևանքով օդային միջավայր է թափանցում որոշ քանակությամբ փոշի, որը կապված է ավտոտրանսպորտի աշխատանքի և բարձման-բեռնաթափման աշխատանքների հետ: Նախնական գնահատականներով հանքի սահմաններում ավտոինքնաթափի անիվների ու ճանապարհի շփման հետևանքով և տեղափոխվող բեռից առաջանալու է շուրջ 0.018տ/տարի փոշի, 0.0000025մլգ/վրկ ածխածնի օքսիդ, 0.0000012 մլգ/վրկ ազոտի երկօքսիդ և 0.00051մլգ/վրկ մուր: Մանրակրկիտ հաշվարկները կներկայացվեն ՇՄԱԳ հաշվետվության մշակման փուլում:

Ջրային ավազան. Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ հայցվող տարածքները գտնվում են Արաքս գետի հունից 95-100մ, Ազատ գետի հունից՝ 32-103մ հեռավորությունների վրա, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում: Բնական ներծծման հաշվին բացահանքի տարածքում հավաքվող ջրերը հեռացվելու են նախնական նստեցումից, պարզեցումից հետո՝ դրենաժային առուններով:

Արտադրական տարածքի կենցաղային կեղտաջրերը կուտակվելու են բետոնապատ անթափանց հորում, որտեղից պարբերաբար հեռացվելու են հատուկ ծառայության ուժերով:

Փոշենստեցման նպատակով բացահանքի ջրցանում չի կատարվելու, քանի որ օգտակար հանածոյի զանգվածը գտնվում է խոնավ վիճակում:

Խմելու և տնտեսական ջրի ջրապահանջարկի և ջրահեռացման ծավալների վերաբերյալ, ինչպես նաև ջրի աղբյուրի վերաբերյալ հաշվարկներն ու տվյալները կներկայացվեն հանքավայրի շահագործման աշխատանքային նախագծում և ՇՄԱԳ հաշվետվությունում:

Հողային ծածկույթ.

Օգտակար հանածոյի արդյունահանման ենթակառուցվածքների (բացահանքեր, արտադրական հրապարակ) ստեղծման արդյունքում ժամանակավորապես օտարվելու են մոտ 1.33հա տարածքներ: Լեռնակապիտալ աշխատանքների փուլում հանքավայրի տարածքից կհեռացվի առանձին հատվածներում տարածված մոտ 0.1մ հզորությամբ և շուրջ 400մ³ ծավալով աղուտ-ալկալի հողերի շերտը, որը կկուտակվի և կպահպանվի հետագայում ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման համար :

Որպես հնարավոր ազդեցություն դիտարկվում է արտադրական հրապարակի տարածքի աղտոտումը նավթամթերքներով:

Բուսական և կենդանական աշխարհ.

Ավազակոպճային խառնուրդի արդյունահանման աշխատանքների բացասական ազդեցությունը հանքավայրի տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա աննշան է, քանի որ ընդհանուր առմամբ տարածաշրջանը հանդիսանում է տնտեսապես յուրացված գոտի:

Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով հայցվող տաածքում մշտական բուսածածկ չի ձևավորվում: Դա պայմանավորված է այն փաստով, որ Արաքսի վարարման ժամանակ տարածքը ամբողջությամբ ծածկվում է ջրով, տեղի է ունենում ավազի նստվածքագոյացում:

Տարաշքում աճող ուռենի և բարդու բարակ շիվանման ծառերը (ընդհանուր 8 հատ) արմատահան կարվեն հանքավայրի շահագործվող տարածքից, կտեղափոխվեն և կտնկվեն արտադրական հրապարակի պարագծով:

Առանձին թփերի տեսկով հանդիպում են *Salsola ericoides* Beib., *Salsola dendroides* Pall., *Salsola nitraria* Pall., *Halocnemum strobilaceum*, որոնք բնորոշ են ՀՀ անապատային լանդշաֆտներին: Դիտարկվել են նաև եղեգ, կեռոն, բադախոտ ծալքավոր, Ճահճածաղիկ վահանատերև: ՀՀ Բույսերի կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ հանքավայրի տարածքում չեն արձանագրվել:

Կենդանական աշխարհի դիտարկված տեսակները ունեն լայն տարածքում ՀՀ տարածքում, գրանցված չեն ՀՀ կենդանիների կարմիր գրքում:

Աշխատանքների ընթացքում տեղի կունենա կենդանիների միգրացիա հանքավայրի տարածքից, քանի որ գործարկվող սարքավորումների աղմուկը, թրթռումները և անձնակազմը հանդիսանալու են անհանգստացնող գործոններ:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Գետամեջի հանքավայրի սահմաններում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան:

Հանքավայրից մոտ 11կմ հեռավորության վրա է գտնվում «Խոր Վիրապ», մոտ 21կմ հեռավորության վրա՝ «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրերը:

Ավազակոպճային խառնուրդի արդյունահանման նպատակով հայցվող տարածքին ամենամոտ գտնվող բնության հուշարձանը «Աղակալած ճահճուտ» կենսաբանական հուշարձանն է է, որը գտնվում է հայցվող տարածքից մոտ 24կմ հեռավորության վրա:

Պատմամշակութային հուշարձաններ

Գետամեջի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի և Բուրաստան բնակավայրի պատմության, մշակույթի հուշարձանների միջև հեռավորությունը կազմում է 2.6-4.27կմ:

Հետևաբար, որևիցե ազդեցություն պատմամշակութային ժառանգության օբյեկտների վրա հանքավայրի շահագործումը չի ունենալու :

Թափոնների առաջացում

Գետամեջի հանքավայրի շահագործման ընթացքում մակաբացման ապարներով ներկայացված ընդերքօգտագործման թափոններ չեն առաջանալու, քանի որ օգտակար կուտակը ծածկող առաջացումներ հանքավայրի տարածքում չկան:

Աղուտ-ալկալի հողերի հեռացվող շերտը թափոն չի հանդիսանում : Ջրհեռացման առվի հատակում նստեցման հաշվին առաջացող առաջացող օրգանական նյութով հարուստ տիղմը օգտագործվելու է արտադրական հրապարակի կանաչապատված տարածքներում՝ որպես պարարտանյութ:

Ավագակոպճային խառնուրդի արդունահանման տեխնոլոգիական գործընթացի հետ կապված կարող են առաջանալ մի շարք արտադրական թափոններ, այդ թվում.

Աղյուսակ 16.

Հ/Հ	Թափոնի անուն	Ծածկագիր	Քանակ	Քիմիական կազմ
1	2	3	4	5
1.	Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան	92110100 13 01 2	1 հատ/տարի	կապարե թիթեղներ 70-75%, պլաստմասե իրան 10-13%, էլեկտրոլիտ 15-20%
2.	Բանեցված կոմպրեսորային յուղեր	54100211 02 03 3	Մոտ 5լ/տարի	յուղ 94.5%, մեխանիկական խառնուրդներ 2.5%, ջուր 3%
3.	Բանեցված տրանսմիսիոն յուղեր	54100206 02 03 3	Մոտ 3լ/տարի	յուղ 97.2%, մեխանիկական խառնուրդներ 2.8%
4.	Հալոգեն չպարունակող բանեցված հիդրավլիկ յուղեր	54100213 02 03 3	Մոտ 5լ/տարի	յուղ 95.5%, մեխանիկական խառնուրդներ 2%, ջուր 2.5%
5.	Բանեցված ավտոմոբիլային յուղեր	54100202 02 03 3	Մոտ 5լ/տարի	յուղ 94.5%, մեխանիկական խառնուրդներ 2%, ջուր 3.5%
6.	Բանեցված դիզելային յուղեր	54100203 02 03 3	Մոտ 5լ/տարի	յուղ 95.0%, մեխանիկական խառնուրդներ 1.8%, ջուր 3.2%
7.	Բանեցված օդաճնշիչ դոզեր	57500200 13 00 4	Նախնական գնահատականներով 4 հատ/տարի	բութադիենային կաուչուկ 97-99%, պողատ 1-3%
8.	Յուղոտված լաթեր	58200600 01 01 4	Մոտ 5կգ/տարի	գործվածք 81-84%, յուղ 10-14%, ջուր 3-6%

Հանքի տարածքում առաջանալու է նաև չտեսակավորված կենցաղային աղբ տարեկան մոտ 32տ ծավալով: Ծածկագիրը՝ 91200400 01 00 4: Կազմը՝ ապակի, փայտ, թուղթ, կտոր, սննդի մնացորդներ, պոլիմերներ: Հրդեհապայթյունավտանգ չէ,

կոռոզիոն ակտիվության տեսակետից պասիվ է, ռեակցիոնունակ չէ: Թափոնը փոխադրվելու է մոտակա աղբավայր, աղբահանության նպատակով կնքվելու է համապատասխան պայմանագիր, վճարումը կատարվելու է ըստ պայմանագրի և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

Աղմուկ, թրթռումներ

Համաձայն գործող նորմատիվ փաստաթղթերի, արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերով տարածքներում աղմուկի (ձայնի) առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 95դԲԱ, իսկ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում ձայնի մակարդակը չպետք է գերազանցի 80դԲԱ:

Աղմուկի ազդեցությունը ազդակիր բնակավայրում գնահատելու նպատակով կատարվել են հետևյալ հաշվարկները:

Հայցվող տարածքում գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը՝ LAէկվ ընդունված է 65դԲԱ:

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում որոշվում է՝

LAտար = Laէկվ - ΔLAհեռ - ΔLaէկր - ΔLAկանաչ բանաձևով, որտեղ՝

LAէկվ - աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, LAէկվ=65դԲԱ,

ΔLAհեռ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված, ΔLAհեռ կազմում է 20դԲԱ,

ΔLaէկր - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով (բացահանքի տարածք), ΔLaէկր = 10դԲԱ,

ΔLAկանաչ - աղմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով, ΔLAկանաչ = 10դԲԱ:

Աղմուկի մակարդակը Բուրաստան բնակավայրի մոտ կկազմի՝

Laտար = Laէկվ - ΔLAհեռ - ΔLaէկր - ΔLAկանաչ = 65 - 20 - 10 - 10 = 25դԲԱ (նորման 45դԲԱ):

Հանքահանման տեխնոլոգիական գործընթացների հետ կապված առաջանալու է առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված է

տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Թոթրումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ:

Սանիտարական-պաշտպանիչ գոտի. Համաձայն 245-71 սանիտարական նորմերի՝ առանց պայթեցման աշխատանքների շինարարական նյութերի արդյունահանման ձեռնարկությունների համար սահմանված է 50մ սանիտարական-պաշտպանիչ գոտի: Հանքավայրը գտնվում է բնակելի գոտիներից նվազագույնը 2.2կմ հեռավորությունների վրա, ինչը գերազանցում է սահմանված սանիտարական գոտու սահմանված չափերը 44 անգամ:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

✓ Վառելիքի պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որին տրվում է համապատասխան թեքություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը:

✓ Մեքենաների տեխնիկական սպասարկման իրականացում մասնագիտացված ընկերությունների տարածքում, որտեղ առկա են բոլոր անհրաժեշտ պայմանները յուղերի, քսայուղերի փոխարինման, պահպանման և պահեստավորման համար : Հանքավայրի տարածքում իրենց սպառողական հատկությունները կորցրած, բանեցված յուղերի և քսայուղերի պահեստավորում, պահպանում չի նախատեսվում :

✓ Կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարողությունների մեջ, տեղափոխվում մոտակա կազմակերպված աղբավայր համապատասխան ծառայություն մատուցող կազմակերպության ուժերով՝ կնքված պայմանագրի հիման վրա:

✓ Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում :

✓ Փոշենստեցման նպատակով հանքավայրին մոտեցող ճանապարհի ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին :

✓ Կեղտաջրերի հավաքում անջրաթափանց բետոնապատ հորատի պ զուգարանում, որը պարբերաբար դատարկում է հատուկ ծառայության ուժերով : Աշխատանքների ավարտից հետո դատարկված փոսը կլցվի քարերով, կծածկվի հողի շերտով :

✓ Արտադրական տարածքի կանաչապատում, որի ընթացքում օգտագործվելու է ջրհեռացման առվի հատակում կուտակված և ավազի լվացումից առաջացած օրգանական հումքով հարուստ տիղմը:

✓ Հանքավայրի մակերեսից մոտ 400մ³ ծավալով հեռացված աղուտ-ալկալի հողերի պահեստավորում լեռնահատկացման ակտի սահմաններում առանձին հատկացված հատվածում, որտեղ հնարավոր կլինի կանխել հողատարման

գործընթացները: Թմբի տեսքով կուտակված հողային զանգվածը կպարարտացվի, կկատարվի անապատային բուսատեսակների (կապար, գազ, ցորնուկային ֆորմացիայի բույսեր) ցանք:

✓ Խախտված տարածքների ռեկուլտիվացիա՝ արդյունահանման աշխատանքների ավարտից հետո կվերականգնվի արտադրական հրապարակի տարածքը, քանի որ հանքավայրը պատկանում է գետաողողատային հանքավայրերի տիպին և բնութագրվում է տարեկան ցիկլում վերականգնվող պաշարներով, այսինքն բացահանքի տարածքը լցվելու է Արաքս գետի ավազակոպճային նստվածքներով յուրաքանչյուր տարվա գարնանային վարարումների ժամանակ: Նախնական գնահատականներով ռեկուլտիվացումը կկատարվի արտադրական հրապարակի 0.023հա տարածքում: Ճանապարհները չեն ռեկուլտիվացվելու, քանի որ դրանք օգտագործվում են տեղի բնակիչների և սահմանապահ զորքերի կողմից: Ընդերքօգտագործման թույլտվության գործողության ժամկետի ավարտից հետո կկատարվի ճանապարհի բարեկարգում, որի համար անհրաժեշտ գումաների հաշվարկը կներկայացվի հանքի փակման վերջնական ծրագրում: Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշիվը կներկայացվի ՇՄԱԳ հաշվետվությունում: Հարթեցումը կկատարվի բուլդոզերի օգնությամբ: Գումարը հատկացվելու է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգով:

✓ Հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի պահանջներին համապատասխան, կկազմվի հանքի փակման վերջնական ծրագիրը, որտեղ կնկարագրվեն բացահանքի, արտադրական հրապարակի լեռնատեխնիկական վերականգնման վերանայված, փաստացի վիճակին համապատասխանող աշխատանքները:

✓ Թափոնների կառավարում: Բանեցված մեքենայական յուղերի և քսայուղերի հանձնվելու են մասնագիտացված ընկերություններին, որտեղ իրականացվելու է դրանց փոխարինումը: Մաշված անվադողերը նախատեսվում է տրամադրել ՊՆ ստորաբաժանումներին՝ մարտական հենակետերը կահավորելու համար: Կապարե կուտակիչները կհանձնվեն դրանց վերամշակման լիցենզիա ունեցող մասնագիտացված ընկերությանը:

✓ Ըստ կիրառելիության ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N 781-Ն որոշման դրույթների ապահովում: Պահպանության ենթակա բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում նախատեսվում է.

- 1) առանձնացնել պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով,
- 2) ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը,
- 3) տեղափոխել պահպանվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

✓ Շրջանի կենսաբազմազանության պահպանության նպատակով Գետամեջի հանքավայրի շահագործման աշխատանքներին մասնակցող անձնակազմը անցնելու է հատուկ վերապատրաստում և ծանոթանալու է շրջանում հայտնի՝ ՀՀ կենդանիների և բույսերի կարմիր գրքերում գրանցված տեսակների վերաբերյալ:

✓ Նախքան աշխատանքների մեկնարկը կրկնակի տարածքների զննում երթուղիներով՝ ՀՀ բույսերի կամ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների հայտնաբերման նպատակով (պայմանագրային հիմունքներով, կենսաբանի կողմից): Տվյալ տեսակի առանձնայկների դիտարկման դեպքում, նախատեսվում է այդ մասին իրազեկել ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը, կազմակերպել աշխատանքային խումբ, մշակել գործողությունների ծրագիր՝ ազդեցությունները բացառելու նպատակով: Արդյունահանման կամ լեռնակապիտալ աշխատանքներ այդ ընթացքում չեն կատարվելու:

✓ Աշխատակիցների հրահանգավորում, ծանոթություն անվտանգության տեխնիկայի կանոններին:

✓ Հանքավայրի տարածքի պարագծով տեղադրվելու են նախագգուշացնող նշաններ, ինչը թույլ կտա կանխել անվտանգության տեխնիկայի հրահանգավորում չանցած մարդկանց մուտքը հայցվող տարածք:

6. ՀԱԿԱՎԹԱՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Բացահանքում բոլոր աշխատանքներն իրականացվելու են հաշվի առնելով «Բաց եղանակով օգտակար հանածոների հանքավայրի մշակման անվտանգության միասնական կանոններ»-ի պահանջները:

Վթարներից խուսափելու համար անհրաժեշտ հիմնական պայմանները թվարկված են ստորև՝

- մուտքը բացահանքի տարածք իրականացվում է ձեռնարկության դեկավարության կողմից տրված անցագրերով;
- բացահանքի շինությունների վրա, մարդկանց կուտակման վայրերում և շարժման երթուղիներում պետք է փակցվեն տեխնիկական անվտանգությանը վերաբերող ցուցադրական միջոցներ: Դրանք են համապատասխան ցուցանակները, նշանները, պլակատները, թույլատրող և արգելող նախագգուշական ազդագրերը, որոնց նշանակությանը պետք է ծանոթ լինեն բացահանքի բոլոր աշխատողները;
- լեռնատրանսպորտային սարքավորումները տեղադրվում են մշակված տարածքների և նստվածքների վերին եզրից ավելի քան 3-4մ հեռավորության վրա, փլուզման գոտու սահմաններից դուրս և որմնակապվում;
- հրդեհամարման համար ջրի ռեզերվուարում պահվում է 100մ³ ծավալով մշտական ջրի պաշար ;
- փոխաբեռնման կետերը, որոնցում որպես միջանկյալ օղակ օգտագործվում են էքսկավատորներ, պետք է բավարարեն հետևյալ պահանջները՝
 - 1) հանքազանգվածաշերտի բարձրությունը պետք է սահմանվի՝ ելնելով հանքազանգվածի ֆիզիկամեխանիկական հատկություններից, բայց ոչ ավելի էքսկավատորի շերտիման բարձրությունից.

- 2) լցակույտի յուրաքանչյուր սեկտորի լցման ժամանակ հանքազանգվածաշերտի թեքման անկյունը պետք է համապատասխանի պահեստավորվող հանքազանգվածի բնական թեքման անկյանը;
- սեկտորում աշխատանքները պետք է կատարվեն համաձայն բացահանքի ղեկավարության կողմից հաստատված աշխատանքների կատարման տեղեկաթերթիկի, իսկ տեղանքը նախատեսվում է կահավորել հատուկ նշաններով և ցուցատախտակներով;
 - փոխաբեռնման կետի բեռնաթափման հրապարակների չափերը պետք է ապահովեն արտադրությամբ զբաղվող բոլոր մեքենաների և մեխանիզմների բնականոն և անվտանգ աշխատանքը՝ դրանց տեղաշարժման և ուղեւորանցման ժամանակ: Բեռնաթափման աշխատանքների կատարման ճակատի երկարությունը և բեռնաթափման հրապարակի լայնությունը պետք է որոշվեն՝ ելնելով տրանսպորտային միջոցների (ավտոմեքենաների, բուլդոզերների և այլն) եզրաչափերից, տեղաշարժման աշխատանքների կատարման ընդունված սխեմայից և շրջադարձի շառավղից՝ հաշվի առնելով բեռնաթափմանը կանգնած և սպասող տրանսպորտային միջոցի անհրաժեշտ անվտանգ հեռավորությունը, որը պետք է լինի 5 մ-ից ոչ պակաս;
 - բեռնաթափման հրապարակում աշխատող ինքնաթափ մեքենայի և բուլդոզերների աշխատանքային գոտում կողմնակի մարդկանց գտնվելը կամ որևէ այլ աշխատանք կատարելն արգելվում է: Նրանք պետք է գտնվեն աշխատող մեխանիզմից 5 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա:

7. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Արտակարգ իրավիճակների պատրաստ լինելու համար հանքավայրի տարածքում նախատեսվում են շարժական կապի միջոցներ, առաջին բուժօգնության միջոցներ, անվտանգության կանոնների վերաբերյալ անձնակազմի գիտելիքների ստուգում:

Արդյունահանման նպատակով հայցվող տարածքը հարում է Արարատյան դաշտի մասը կազմող հարթավայրին, որի թեքության անկյունը չի գերազանցում 4°: Հանքավայրի տարածքի բարձրությունը տատանվում է 818-820մ-ի սահմաններում:

Մոտակա հայտնի սողանքային մարմինը քարտեզագրվել է հանքավայրից 9.9-12կմ հեռավորության վրա՝ Այգեզարդ բնակավայրից մոտ 2կմ հյուսիս-արևելք, Քաղցրաշեն բնակավայրից մոտ 0.5կմ հարավ-արևելք: Սողանքային մարմնի կենտրոնի կոորդինատներն են. հյուսիսային լայնությունը՝ 39° 58' 17" և արևելյան երկայնությունը՝ 44° 38' 14": Մարմինը գտնվում է 982մ բացարձակ բարձրության վրա, զբաղեցնում է մոտ 184հա տարածք (երկարությունը՝ 1300մ, լայնությունը՝ 1800մ):

Հետևաբար, սողանքային երևույթներով պայմանավորված արտակարգ իրավիճակ հանքավայրում լինել չի կարող:

Հանքավայրում արտակարգ իրավիճակները կարող են պայմանավորված լինեն հետևյալ գործոններով.

1) Երկրաշարժ՝ հաշվի առնելով, որ Հանրապետության տարածքը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում: Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի «Սեյսմակայուն շինարարություն. նախագծման նորմեր» N 24-Ն հրամանի՝ հանքավայրի տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 300սմ/վրկ² կամ 0.3g գրունտի հորիզոնական արագացման մեծություն:

Նախատեսվում է մշակել ուժեղ երկրաշարժերի դեպքում գործողությունների պլան՝ վտանգավոր տարածքներից աշխատակիցների ապահով տարահանումն

իրականացնելու նպատակով : Անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգավորում իրականացնելու ժամանակ առանձին ներկայացվելու են նաև երկրաշարժերի ժամանակ աշխատակիցների պահվածքի կանոնները, գործողությունների հաջորդականությունը : Աշխատանքները սպասարկող կենցաղային նշանակության վազոն-տնակում նախատեսվում են առաջին օգնության դեղորայքային փաթեթներ :

2) Հրդեհներ՝ կապված մարդածին գործոնների հետ: Հրդեհային անվտանգությունն ապահովելու համար աշխատակիցները տեղեկացվելու են տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող նյութերի հրդեհավտանգության վերաբերյալ : Նշանակվելու է հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ, մշակվելու է հրդեհի դեպքում անձնակազմի գործողությունների պլան: Հանքավայրի բլոկներում՝ հատուկ հատկացված վայրում տեղադրվելու են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, ավագով արկղ, բահ:

3) Անբարենսպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագացում, անհողմություն, անոմալ բարձր շոգ կամ ցուրտ, թանձր մառախուղ, ամպրոպ) : Անբարենսպաստ օդերևութաբանական պայմանների իհայտ գալու դեպքում կիրառվում են հետևյալ միջոցառումները (ըստ իրավիճակի).

- ավելացվում է կատարվելիք ջրցանը,
- կրճատվում է աշխատանքի տևողությունը,
- կրճատվում է միաժամանակ աշխատող մեքենաների և մեխանիզմների քանակությունը,
- նվազեցվում է փոշեգոյացման հետ կապված աշխատանքների ծավալները,
- բեռնատար մեքենաները կահավորվում են հատուկ մառախուղի լույսերով,
- աշխատակիցները պատսպարվում են արտադրական հրապարակում տեղադրված վազոն-տնակում:

4) Արաքս գետի վարարում՝ ապրիլի վերջից-հունիսի վերջ: Այս շրջանում հանքավայրի տարածքում աշխատանքներ չեն իրականացվելու: Դադարեցվելու է տեխնիկայի և մարդկանց մուտքն ու տեղաշարժը հանքավայրի սահմաններում:

Հանքում աշխատանքների անվտանգ իրականացման նպատակով.

- աշխատանքի են թույլատրվում անձիք, որոնք ունեն հատուկ պատրաստվածություն և որակավորում,
- օգտագործել մեքենաներ և մեխանիզմներ, սարքավորումներ և նյութեր, որոնք համապատասխանում են անվտանգության պահանջներին և սանիտարական նորմերին,
- անցկացնել պլանային-զգուշացնող համալիր վերանորոգումներ, պրոֆիլակտիկ աշխատանքներ և այլ դիտարկումներ,
- աշխատանքի ժամանակ պետք է պահպանվեն անվտանգության տեխնիկայի կանոնները:

Նախատեսվում է կատարել պլանային աշխատանքներ ուղղված արտադրական տրավմատիզմի նվազեցմանը, ժամանակին, ոչ ուշ քան երեք ամիսը մեկ, աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով:

8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ) ՊԼԱՆ

Օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ;
2. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ ;
3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով արտադրական հանքավայրի տարածքի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ (Հ.նմ.-1);
4. Առանձին կուտակված աղուտ-ալկալի հողերում հումուսի պարունակության մշտադիտարկում (Հ.նմ.-2) ;
5. Արաքս (Ջր.նմ.-ն և Ջր.նմ.-3) և Ագատ (Ջր.նմ.-1) գետերի ջրերի նմուշարկում աշխատանքների ընթացքում յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ՝ պղտորության ուսումնասիրության նպատակով;
6. աղմուկ վերահսկողություն տարեկան մեկ անգամ ;
7. կենսաբազմազանության ուսումնասիրություն, նկարագրում՝ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն (հստակ դիտարկան կետ նշել հնարավոր չէ, դիտարկումը կատարվելու է հանքավայրում և հարակից տարածքներում) (Կ.Մ.Տ):

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում :

Տարածքի կենսաբազմազանության մշտադիտարկումը կատարվելու է պայմանագրային հիմունքներով՝ կենսաբանի և բուսականի կողմից:


Ստացված տեղեկատվությունը ներկայացվելու է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն՝ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման պահանջներին համաձայն: Մշտադիտարկման նպատակով ընկերությունը տարեկան մասնահանելու է 890.0հազ.դրամ:

Գետի հունի փոփոխությունը բացառելու նպատակով յուրաքանչյուր ամիս կատարվելու է գետի հունի վիճակի ու կայունության մշտադիտարկումներ (տոպոհանութային աշխատանքներ): Մշտադիտարկումների կառուցվածքները ներկայացվում է նաև աղյուսակ 17-ում:

Աղյուսակ 17.

Մշտադիտարկումների օբյեկտը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
Մթնոլորտային օդ, հանքավայրի տարածք, աշխատանքների իրականացման վայր	Փոշի, ածխածնի օքսիդ, ազոտի օքսիդներ, մուր, ծծմբային անհիդրիդ	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	Աշխատանքների իրականացման վայր, շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
Հողային ծածկույթ, արտադրական հրապարակ	Հողերում նավթամթերքների պարունակությունը	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	Հանքավայրի տարածք, ամսական մեկ անգամ
Կուտակված աղուտ-ալկալի հողեր	Հումուսի պարունակություն	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	Հանքավայրի տարածք, տարեկան մեկ անգամ
Արաքս և Ագատ գետերի ջրեր	Պղտորություն	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	Շաբաթական մեկ անգամ
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ. հանքավայրի և հարակից տարածքներ	Տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	Հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	Հանքավայրի և հարակից տարածքներ, տարեկան մեկ անգամ
Աղմուկ, աշխատանքների իրականացման վայր	Աղմուկի մակարդակ	Չափումներ ավտոմատ սարքերով	Հանքավայրի տարածք, տարեկան մեկ անգամ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության աղտոտման կանխարգելման մոնիտորինգի կետերի տեղադիրքը ներկայացված է ստորև նկար 13-ում:



Նկար 13.

Գրականություն

1. Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքի
2. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
3. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
4. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
5. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
6. Животный мир Армянской ССР. Даль С.К ,1954
7. “Флора и растительность рек и озер Армении и их народнохозяйственное значение”. А.М. Барсегян
8. “Растительность Армянской ССР”. Магакьян А.К.
9. “Флора, растительность и растительные ресурсы Армении”, Институт ботаники НАН РА Армянское ботаническое общество. Ереван
10. “Дикорастущие съедобные растения Армении”. А.П. Тер-Восканян, Ученые записки Ереванского государственного института.
11. “Цветущие уголки биоразнообразия”, FAO,
<http://www.fao.org/3/i1687r/i1687r08.pdf>
12. ՀՀ Արարատի մարզպետարանի պաշտոնական կայք

